ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«20» հուլիսի 2018 թվականի № 93-Ա

«ԱՐՄԱՆ ՕՁՆԵՑԻ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով 2018 թվականի հուլիսի 17-ին կայացած վարչական վարույթի արդյունքները.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Դադարեցնել «Արման Օձնեցի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՀՀ Լոռու մարզի բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը:
2. Ուժը կորցրած ճանաչել 2014 թվականի ապրիլի 4-ի օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/502 թույլտվությունը, լեռնահատկացման ԼՎ-502 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-502 պայմանագիրը:
3. Ընդերքի գործակալության պետին՝
1) 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.
2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ